



83. ԱՎՁԻ ԲԱԼԱԲԵԳՐ

Դե որ խոսկը պանցվել ա ճակատի կիրի մասի, մին նաղըլ էլ եմ պատմիլու, անգաճնիտ պան'ց արեք, լն'վ լըսեք:

Ինըմ ա, ինըմ չի, մին թաքավոր ա ինըմ, համա ըստան ոչ մին խոխա չի ինըմ:

Մին քըչեր էլ արագըմը թաքավորի կուշտն ա կնլիս սիպտակ մըրքավոր մին մարթ հու ասըմ ա.—Գիղըմ եմ քու ամմանամեծ դանդը, կընգանըտ չըպետք ինիլն ա, սորվանից իննը ամիս, իննը օրը որ աս կենա, քե մին ոսկիքաքոյ տղա յա ինիլու, պայց տո՛ւ վէլ կնիկըտ էլ վեց ամսա եղը մեռնիլու վեք: Թան ոագի ես, ասա':

Թաքավորն ասըմ ա.—Իմ ինիլ-չինիլը էլ պաննի պետկը չի, միննակ թան իմ թախտը շան ու կելի ճանգը ընգնի ոչ: Ռագի եմ:

—Դե որ ոագի ես, հաստա'դ գիղան, որ տղա ունես, անըմը կը-տինես Բալաբեգ, —ասըմ ա բիձեն հու չըքվըմ:

Իննը ամիս, իննը օրը թըմամըմ ա, թաքավորին մին տղա յա ինըմ, անըմը տինըմ են Բալաբեգ, մեծ քեփ ու ուրախութուն են սարքըմ, որ թախտը տանտակ չի մնալու, համա տղի վեց ամիսը հենց թըմամըմ ա, թան չէ, թաքավորն ու թաքուհին մեռնըմ են:

Նանգիր-վանգիրնին ուրանց թաքավորին ու թաքուհուն առոք-փառոք թաղըմ են, եղո նըստըմ են մըսըլհաթի, թան ում տինեն թաքավոր, մինչու Բալաբեգի մեծանալը: Շատ որ խելք խելքի են տալիս, փո՛ւչկն ընգնըմ ա մեծ վանգիրին: Էս վանգիրն էլ հենց տը-հենց մին պաննի յա սպասիլիս ինըմ: Որ տանըմ ա թաքավոր, որ պերանի համը կնլիս ա տեղը, մին քըչեր էլ Բալաբեգին փըթաթըմ ա բարուրի մեչին, տանըմ քոլը, թողըմ մին ծառի տակի, եղո չավ անըմ, թան թաքավորի տղեն էլ ա մեռել: Սուտ տեղից մին ղուլթի յա չինիլ տալիս, էլհան առոք-փառոք տանըմ են թաղըմ, թաքավորու-թունը մնըմ ա մեծ վանգիրի ծեռին:

Թո էտ վանգիրը ուրան թաքավորութունն անի, մենք քինանք տենանք Բալաբեգի ախըրն ինչ տանով:

Բալաբեգը հենց որ քնիցը գարթնըմ ա, ըսկսըմ ա լնց ինիլը: Էտ սանսի վրեն մին ածղահա արչ կնլիս ա, հոտ քաչըմ, թանթերո-վը տեսուտեն շուռ տալիս, եղո խըտըտըմ հու տանըմ ուրան պո՛ւնը:

էս արչին էրկու քոթոթն ա ինրմ, էտ քոթոթնների նհետ Բալաբեգը ծիծ ա ուտըմ, ընդրանց նհետ հաղ անըմ, մինչու բաբաթ մեծանըմ ա: Որ տարին աս ա կենըմ, Բալաբեգը տանըմ ա իգզան-բաբաթ մին տղա, արչի մնան ուժեղ, մարթի մնան խելունք:

Օրերիցը մին օր էլ էտ ղոլերովը անց ա կենալիս ինըմ մին ավչի, տենըմ ա էրկու քոթոթի նհետ մին խոխա յա հաղ անըմ, թաքուն մոտիկանըմ ա, փրոնըմ Բալաբեգին, տանըմ տուն: Տոն մի ասիլ, էս ավչուն էլ խոխա չի ինըմ: Կնիկը եփ խոխին լըղըցնըմ ա, տենըմ ա դոճիցը մին մենդալ ա կախ: Հանըմ ա, տալիս մարթին, պացըմ են, կարթըմ, որ տղի անըմը Բալաբեգ ա, ինքն էլ էրկու տըրեկան ա:

Ավչին ամման օր իչքան ավի ա քինըմ, կոռծը հաջողըմ ա, բոլբոլ ավի միս ա պերըմ, ուրանք էլ են ուտըմ, ծախըմ էլ են հու սըհենց իրեքով ապըմ են:

Բալաբեգը եփ տանըմ ա տասը տըրեկան, համա ոչ ով վըհատըմ չէր, որ էտքան կոճիր ա, էնքամ փարթամ հու նախշուն տղա էր: Ամման օր հորը յախեն կըտըմ ա, թն ուրան էլ նհետը ավի տանի, համա հերը, որ շատ էր սիրըմ տղին, ուզըմ չէր տանի, վախնըմ էր, որ մին պան կըպըտահի: Համա դե վերչիվերչո կարըմ չի ատկազ անի, տանըմ ա:

Բալաբեգին նրատըցնըմ ա մին կաղնու ծառի վրան, թն թըմաչա անի, ինքը սկսըմ ա ավի ման կան: Քըսօր չըտանան՝ մին եղնիկ ա սըպանըմ, շըլանկըմ, կանխ ծառի կուշտը:

Մինչու ինքը ավի եննիցն էր, Բալաբեգի նինած ծառին ա մոտկանըմ մին արչ: Բալաբեգի արինը եռ ա կանխ, ծառիցը թըռնըմ ա հու արչի նհետ կոխ կենըմ:

Արչը, որ տենըմ ա Բալաբեգի ուժը, հոտը առնըմ ա, ասըմ ա.—Ադամորթի՛, տուն կարալ չիր ինձ հախտիլ, համա հախտեցիր, քանիչ որ իմ մոր կաթն ես ծըծել, մեզ նհետ հաղ արել: Բալաբեգը կլխի յա ընգնըմ, որ էտ արչը ուրան ախպերացուն ա, ըսկսըմ ա նհետը հաղ անիլը, ոնց որ մին վախտ հաղ էր անըմ:

Ավչին, հենց որ տենըմ ա՝ Բալաբեգը հեսա մին արչի նհետ կոխ ա կենըմ, թըվանգը քաչըմ ա, թն արչին ըսպանի, Բալաբեգը թողըմ չի, ասըմ ա.—էս արչը իմ ախպերացուն ա, ես ըստրա մոր կաթն եմ ծըծել, ըստրա նհետ մեծացել: Ինձանա քե ամանաթ, ըստրանա եղը ոչ մին արչի ծեռ չըտաս, բոլրդան ախպորցըս էլ կըսպանես:

Ըտանա եղը իչքան երկուսով ավի են քինըմ, ավչու վեքը ալչու յա ընգնըմ, անընհանը մին ավ ա ճանգն ընգնըմ, չիլանկըմ ա, պերըմ տուն, համա Բալաբեգը ինչ ըսպանըմ ա, տալիս ա արչերին, ղըչերին հու կելերին: Սըհենցութունով աժդահա տըղամարթ տանան՝ Բալաբեգը հորացեղի փեչանգն ա սըվորըմ:

Հերացեղը Հա ուզում ա Բալաբեգին փրսակի, Հա մերն ասում ա, թն Հնյն խոխա յա, մինչու մին օր էլ ավչին ծանդրը Հիվանդանում ա Հու մեռնում, կնիկն էլ եննիցն ա Հոքին տալիս: Որ ասում են՝ կարկուտը տրված տեղին ա տալիս, սուտ չի: Բալաբեգը էլ Համ մընում ա եթիմ, կլիսը վեր ա ունում, ուրան տալիս քար ու քոլին: Ըսկսում ա ընդեղ ապրիլը, ուրան արչերի Հու կելերի նՀեստ:

Օրերից մին օր էլ, ավի տոնս եկած վախտը, տենում ա մին ծիավոր ա ման կնյիս քոլումը:

Կանչում ա. — Ո՞վ ես, Հեյ, մին մո՛տ եկիր:

Ծիավորը ջուղաբ չի տալիս:

Բալաբեգը Հերսոտվում ա, մին ծառ ա քոքաՀան անում, որ տա ծիավորի կրխտվը, ստեղ ծիավորն ասում ա. — Հերսըտ քե՛ պահի, Հնյն տոն ասա՛ տենամ՝ ո՞վ ես, ի՞նչ ես շինում մեր քոլումը, էդո քե ջուղաբ կըտամ:

— Ես ավչի Բալաբեգն եմ, էս քոլն էլ ավչունն ա, բա քու անումը ի՞նչ ա:

Ծիավորը ծոցիցը մին դնստան մանիչանկ ա Հանում, նըչանց տալի:

— Ո՞ւմ ժնոանգն ես, — Հըրցընում ա Բալաբեգը:

Ծիավորը մին ծառ ա նըչանց տալի:

— Բա ինչի՞ ես ման կնյիս:

Ծիավորը մին կրխտարի պոզ ա նըչանց տալիս:

Բալաբեգը կլխի յա ընգնում, որ ծիավորը ախճիկ ա, անումն էլ՝ Մանիչանկ, որ Հերը Մառուկ թաքավորն ա, ինքն էլ կրխտարի յա ման կնյիս:

Էն սըՀաթին մին եղնիկի ծնք ա փրոնում, փեչքեչ տալիս ծիավորին, ծիավորն էլ ուզում ա մին պոնոր ոսկի տա Բալաբեգին, Համա վեր չի ունում, ասում ա, ոսկին քոլումը կին չունի, ինչի՞ս ա Հարգավոր:

Թաքավորի ախճկա սիրտը թոնդումը կըպնում ա տղին: Դե ոնց չըկըպնեք, դոնդ ա՛ խխկադ ավչի էր, Համա արևտվ էր, բույ ու բուսաթը՝ չիմչատ, ունքերը՝ էրկու կեռ յաթաղան, աչկերը՝ փրսպըղան աստըղնի, մազերը՝ խուճուճ, դե սիրտն էլ՝ վախին բխսնքն, պարի:

Ախճիկն էլ Բալաբեգին ա տուր կնյիս, Համա ոխսկ չի անում, պան ասի, չունքի գիղում էր ընդրա ով ինիլը:

Ըտենց էլ ուրոնը աչկ տիրած պըժանվում են: Համա դե մեր պապերը մին դոնդ խոսկ ունեն. «Մին առվով, որ ճոնրը քինանցել ա, էլ Հնյն պղղի քինան»: Բալաբեգը Մանիչանկին մին անքամ էլ ա ոնստ կնյիս քոլումը մինն ու մինակ:

Հըրցընըմ ա, թի՛ս էս անքամը հուր ա քինըմ, ախճիկն էլ ասըմ ա.—Իմ հերը մին նախշուս բաղ ունի, էտ բաղըմը մին խընձորի ծառ կա, որ համանշան ոսկի պըտուղնի յա տալիս: Համա աման քըչեր էտ ծառի ոսկի խընձորնին պակսըմ են: Ով ա կողանըմ, ոչ ով կարըմ չէր գիղա՛ր: Էրկու ախպեր ունի նորաթինա դարավուլ ին կաղնըմ, վերչը տենըմ են, որ մին ոսկիթեփուռ ղուչ ա կնլիս, կողանըմ: Ուզըմ են փըռնեն, անջաղ մին թեփուռ ա ընգնըմ ծեռքերնին: Պերըմ են հորըս կուչտը, հերըս ասըմ ա. «Թի՛ս էս ղըչի թեփուռն էսքան ղանշանգ ա, բա ինքն ի՞նչ կինի: Քինանցք ախշարքից ախշարք մա՛ն եկեք, քըթե՛ք էտ ղըչին, պերե՛ք: Ով ղուչը պերավ, ընդան էլ կըտամ իմ մալ ու մոլըք»: Ախպերնիս էլ քինանցել են ղուչը պերիլի: Քինանլից առաչ մին աման կաթ ին տիրել իմ օթաղըմը հու ասել. «Աման օր ամանին կը եչես, թի՛ս կաթը սիպտակ ինի, գիղա՛, մենք սաղ-սալամաթ ենք, թի՛ս կարմիր ոանգի իլավ, գիղա՛, փորցանքի մեչ ենք, մին պա՛ն մըտածի»: Ըսօր կաթը կարմիր ոանգի էր, ես էլ տո՛ւս եկա, քինամ տենամ՝ ախպորցըս ինչ ա իլել:

—Թաքավորի ախճի՛կ Մանիչանկ, քե էրկու ախպեր չունես, իրեքն ա, ընդանց քի՛սանց քինանլի նորաթը քունը չի, իմն ա, ես կըքինամ: Ա՛ն էս տանանկը, տա՛ր տուն: Աման օր կը եչես, թի՛ս որ փըսպըղաց, գիղա՛, որ կոռծերըս աչող ա, թի՛ս որ ժանգոտած իլավ, գիղա՛, որ ես էլ կամ ոչ.—ասըմ ա Բալաբեգը, Մանիչանկին ետ ղըրկըմ, ինքը քինըմ ուրն արչ ախպորցը կուչտը, թի՛ս՝ բա ասիլ չեք, սըհենց ու սըհենց: Ես քինըմ եմ ոսկիթեփուռ ղուչը պերիլի:

—էտ շատ տըժար կոռծ ես փըռնել,—ասըմ ա արչ մերացեղը,—համա ղե որ քինըմ ես, լըսի՛, թի՛ս ինչ եմ ասըմ: Քոլըմը ապըրըմ ա մեծ Թողլիգոթընը, ընդրան տո՛ւ շատ ես լնվութուն արել, համանշան ավի միս ես տըվել, մ՛հի քինա՛ կուչտը, էն քե կըտանի քու ուզած տեղը, համ էլ թի՛սըրը կասի, թի՛ս ոնց ծեռք քըցես ոսկիթեփուռ ղուչը:

Բալաբեգը քինըմ ա Թողլիգոթընի կուչտը, պատմըմ ուրն Դարըր:

Թողլիգոթընը ասըմ ա.—Շատ ես եղի եկել, ախր ըտենց ճընապա քինանլի մ՛հար շատ եմ պառավ, ուժըս հատել ա, համա ղե ղանրդ մի՛ անիլ: Տո՛ւ անըմով ավչի ես, քոլիցը օխտը ալապագտրակ ես սըպանըմ, օխտն էլ վիրու էժ, տասնըչորս ղառինի մեչ ճո՛ւր ես լըցնըմ, պեռնըմ ինձ, տո՛ւ էլ նըստըմ ես վըրես: Եփ կասեմ՝ ղա՛, սիֆտիցը ալապագտրակների ջանդանքը կըտինես պերանըս, եղո վիրու էժերի, եփ կասեմ՝ ղո՛ւ, ղառինով ճո՛ւրը կըքըցես պերանըս:

Բալաբեգը ասածնին անըմ ա, պեռնըմ Թողլիգոթընին, ինքն էլ նըստըմ, էս էլ թեերը պանց ա անըմ, թըռնըմ: Ղա՛ ասիլիս՝ միսն

ա քրցրմ, դո՛ւ ասիլիս՝ ճո՛ւրը: Սըհենց կնլիս են հըսնըմ ոսկիթե-
փուռ դըչի ապրըմ տեղը:

Բալաբեզը տենըմ ա՝ հեսա ոսկի ծառի վըրենն ոսկիթեփուռ
դուչն ա նըստած:

Թողլիգոթթրանը ասըմ ա.—Դո՛ւզ ա դուչը շատ ա նախշուն, հա-
մա պո՛ւնը էլըթեթանրին ա, լնվ միտըտ պահի: Եփ դըչին փըռնիլի
ինես, սայաղ կինես, որ պո՛ւնին կըպնես ոչ: Քինա՛, Աստոծ քե նհեստ:

Բալաբեզը կամանց-կամանց մոտկանըմ ա ոսկի ծառին, ծեռը
մեկնըմ ա, որ դըչին փըռնի, բո՛ւրդանն ծեռը կըպնըմ ա պո՛ւնին, հա-
զար տեղից գանգանկնին ըսկսըմ են ծլընգալը, էն սըհաթին ժողո-
վուրթը վըհաքվըմ ա, կո՛ղին փըռնըմ, տանըմ թաքավորի կուչտը:

Թաքավորն ասըմ ա.—Թն մինչու լո՛ւսը պանցվիլը ինձ մհար
պերես ոսկի ծին, էն վախտը ոսկի դուչն ո՛ւրն ոսկի դնփանգովը քե
փեչքեչ:

Ինչ արած, Բալաբեզը ուզի յա կենըմ:

Հենց պալատիցը տո՛ւս ա կնլիս Թողլիգոթթրանը կաղնըմ ա
կոխկին հու նախատըմ.—Կարացիր ոչ թնչնխուստին տո՛ւրո՛ւր
կնա, պո՛ւնին կըպնես ոչ, մին կոո՛ծը էրկու շինեցիր, համա չարեն
ի՞նչ, նըստի՛ մեչկիս, քինանք ոսկի ծիան քամակիցը: Համա միտըտ
պահի՛, եփ ծին կո՛միցը հանիլի կինես, մըղայիթ կաց, որ ջըլավին
ծեռ չըտաս:

Աչկի մին ճըպպոցըմը Թողլիգոթթրանը Բալաբեզին հըսցընըմ ա
տեղ, ինքը մնըմ ա տանը, Բալաբեզին դըրկըմ ա կո՛մը՝ ծին տո՛ւս
պերիլի, համ էլ ասըմ ա.—Ասածըս մըտահան չանես, հա՛, ջըլավին
ծեռ չըտաս:

Բալաբեզը մըննըմ ա կո՛մը, համա ոնց անըմ ա, անըմ չի, ծեռը
էլհն կըպնըմ ա ջըլավին, էլհն հազար տեղից գանգանկնին ըսկսըմ
են զընգզընգալը, ժողովուրթը վհաքվըմ ա, կո՛ղին փըռնըմ, տանըմ
թաքավորի կուչտը:

Թաքավորն ասըմ ա.—Ըստեղան օխտը մանգիլ տենը մին թա-
քավոր ա ապրըմ, էտ թաքավորին էլ մին նախշուն ախճիկ ունի,
թն մինչու լո՛ւսը պանցվիլը պերես, ծին էլ, ո՛ւրն ոսկի ջըլավն էլ՝ քե
փեչքեչ, թն է՛՝ կլոխըտ կըտրիլ կըտամ:

Բալաբեզը, ճարը կըտրած, ասըմ ա՝ կըպերես:

Թողլիգոթթրանը էլհն յա ըսկսըմ թո՛ւք ու մուր թափիլը
Բալաբեզի կըլխին.—Ա՛յ տըղա, շատ բաշարմազ ես, է՛, ախըր բոյ
ու բուսիտ եչիլիս մարթի խեղք ա քինըմ, համա կըլխըմըտ խեղքի
թիքն ասածը կա ոչ: Բա քե ասել չի՞, մըղայիթ կըկենաս, ջըլավին
ծեռ չըտաս: Մ՛հի էլ մին կոո՛ծը իրեքը տնո՛ւնվ: էս անքամը կարալու

չեմ քե տեղ հրացընեմ, բիզարել եմ: Համա որ օխտը ռխճար ճարես, իրեք տիկ էլ ճո՛ւր, կըտանեմ:

Բալաբեգը Թողլիգոթրանի ասածնին ճարըմ ա, տինըմ ղըչի մեչկին, ինքն էլ նստըմ հու թըռնըմ են:

Ղուշը հենց որ «ղա՛» յա անըմ, մին ռխճար ա քցըմ ղըչի պերա- նը, «ղո՛ւ» ասիլիս էլ՝ մին տիկ ճո՛ւր:

Հենց որ հըսնըմ են տեղ, Թողլիգոթրանն ասըմ ա. —Տո՛ւ ըստեղ սպասի՛, էս անքամը ես եմ քիննլու:

Բալաբեգը մին կարքին նափնա քաչած չի ինըմ, եփ Թող- լիգոթրանը ետ ա տանըմ թաքավորի ախճիկն էլ նհետը:

Ղըչի մեչկին նստիլն ու տեղ հըսնիլը մին ա ինըմ, Թողլիգոթրանն ասըմ ա. —Թաքավորի՛ ախճիկ, տո՛ւ ստե՛ղ կաց, մենք քինըմ ենք ոսկի ծին պերենք:

Հենց մոտկանըմ են պալատին, Թողլիգոթրանը տանըմ ա մին ղաչանց ախճիկ հու Բալաբեգին ասըմ ա. —Ինձ տա՛ր թաքավորի կուշտը, տո՛ւր ուրանն ոսկի ծին ու ջըլավը ուղի՛: Հենց որ տվավ, կըկանա թաքավորի ախճըկանն էլ կըտինես թանքիտ, կըքիննաք: Մնացածը քու կոռծը չի:

Թաքավորը հենց ա գիղըմ՝ Բալաբեգի պերածը թաքավորի ախճիկն ա, ծին ուրն ջըլավովը տալիս ա ընդրան, ախճըկանը ղըր- կըմ ուրն օթաղը: Բալաբեգն էլ ծին նըստըմ ա, կնլիս իսկական թաքավորի ախճըկանը տինըմ թանքին, ճընապա ընգնըմ:

Երգրորթ թաքավորի պալատին հըսած ոչ՝ տենըմ են Թող- լիգոթրանը հեսա ստեղ ուրանց ա սպասըմ: Էլհա ախճըկանը ոսկի ծիան նհետ թողըմ են ըտեղ, ուրանք քինըմ: Թողլիգոթրանը էս անքամը տանըմ ա ոսկի ծի հու մըննըմ են ամարաթը:

Ըստեղ էլ Բալաբեգը ծի տաննձ Թողլիգոթրանին փոխըմ ա ոս- կիթեփուռ ղըչի նհետ հու թանգան ճընապա ընգնըմ՝ ոսկի ծին նըստած, թաքավորի ախճիկը թանքին, ղուչն ուրն ղանփանգովը կոթըմը:

Շատ են քինըմ, թն քիչ, հըսնըմ են հենց էն քուլը, շտեղ Բալաբեգն ա ապրիլիս ինըմ:

Թողլիգոթրանը որ ընդանցից չոտ ա տեղ հըսած ինըմ, առաչ ա կնլիս հու ասըմ. —Բալաբե՛գ, մհի էլ իմ օքնութուռն պետկտ չի, սըհենց ժո՛չ ու քո՛ւլփանթով քինն՝ թաքավորի կուշտը, համա ին- ճանա քե ամանաթ, ճընապին ոչ մին տեղ քնես ոչ, հա՛, լնվ մի՛տըտ պահի՛ քնես ոչ:

Բալաբեգը ղուշը ղանփանգովը վեր ա ունըմ, ախճըկանը նըս- տըցնըմ ոսկի ծին, ինքը ջըլավը փըռնըմ հու ճընապա ընգնըմ:

Մինչու քըչերվա կեսը Բալաբեգը մին թնհրո՞վ նւրան պահւմ ա, քնրմ չի, համա քունը գորում ա:

Թաքավորի ախճըկանը վեր ա պերում, ծիան ջըլավը փըթաթըմ ա կրոնովը, ուզում ա քնի, մին խըչչոց ա լըմ, Թողլիգոթըմանը վեր ա կալիս կըչտին հու ասըմ.—Բա քե ի՞նչ ի թնփչուր արել, բա տոն արչի կաթ չես ծըծե՞լ:

Բալաբեգը նորից ա ճընապա ընգնրմ, համա լիսատեմին էլ կա-
րում չի տիմանն, թնգանգան մին ծառի տակի տեղ ա չինրմ, ծիան ջը-
լավը փըթաթըմ կրոնովը, ղանփանգն էլ տնրմ կըլիսատակին հու քնրմ:

Տոն մի ասիլ, էտ ծառը Մանիչակի ախպորցիցը մինն ա ինրմ, կոխկին էլ՝ էն մինը: Բալաբեգի քնիլն ու էտ ծառերի մարթ տանունը մին ա ինրմ: Էրկու ախպերը Բալաբեգին հեխտըմ են, ախճըկանը, ղանփանգն ու ծին վեր ունրմ, կալիս հոր տունը:

Ծառուկ թաքավորն ախշարքովը մին ա տանըմ, եփ տենըմ ա նւրն տըղոցը սաղ-սալամաթ, մեծ քեփ ա սարքըմ, համա էտ քեփին Մանիչակը նըստած ա ինրմ չանգի պես մըրխկած: Մինչու ախպերանց կալը Բալաբեգի ղամեն փըսպըղալիս ա ինրմ, համա որ ախպերին կալիս են, ղամեն ժանգոտըմ ա, Մանիչակն էլ կլիսի յա ընգնրմ, որ Բալաբեգի կլիսին հենց ախպերին են փորցանք պերել:

Թո ստանք նւրանց քեփն անեն, մենք խանընրը տանք Բալաբեգիցը:

Թողլիգոթըմանը ռավոտը չոտ Բալաբեգի ռնգովը թոնիլիս ա ինրմ, մին էլ տենըմ ա՝ Բալաբեգը տափին մեկնված ա, կոխկին էլ ո՛չ ախճիկը կա, ո՛չ ծին, ո՛չ էլ ղանփանգը:

Վեր ա կալիս, տենըմ, որ վըրեն նանփան չըկա, ջնհիլ ղարա-
ղուններին ղըրկըմ ա անամահական ճըրի եննն, ինքը թևերը փորմ Բալաբեգի վրեն, որ արևը էրի ոչ:

Ղըչերը կալիս են, որը հըսնրմ ա, կնդիչիցը մին քանի կաթ ճոնր ա քցըմ Բալաբեգի վրեն, կլիսին, իրեսին, հենց որ պերանը պացվըմ ա, մին քանի կաթ էլ պերանն են քըցըմ հու կենթանըցնրմ:

Թողլիգոթըմանն ասըմ ա.—Ստանա եղը տոն օլոն չունես:

—Մե՛ծ Թողլիգոթըման, տափից երգինք քեզանա չնորակալ եմ: Համա գիղըմ չեմ լնավոթունիտ տակիցը ոնց եմ տոն կալու:

—Վախտին տոն էլ մեզ ես լնավոթուն արել, մինըս մինի պարտ չենք:

Բալաբեգը վեր ա կենըմ, կալիս Ծառուկ թաքավորի քաղաքը հենց էն վախտը, եփ թաքավորը ուզըմ ա նւրն թաքավորութունը թողա ժանանգներիցը մինին, համա գիղըմ չի՝ որին թողա, ոսկի-
թեփուռ ղուչը էրկուսով են պերած ինրմ:

Չենց էտ վախտը Մանիչակը տենըմ ա, որ Բալաբեգի ղամեն էլ հն

առաջվա պես փրսպրդրմ ա, ուրխանրմ ա, որ ջնհիլ-ջիվան էն տրդեն փորցանքից պրրծել ա, հուր որ ա ուրն մասի մին խնրնր կրտա:

Թաքավորութունի մեծամեծնին հենց վրհաքվրմ են, որ թաքավորի նհետ մրսլըհաթ անեն, թն տրդորցիցր որն ա արժանի թախտին, Մանիչանկը մեջլիսին ասրմ ա.— Պալատի առաջի բաղըմը մին մեծ քար կա, էտ քարի մեչին խրված մին թուր կա, ով կարա էտ թուրը քաչի հանի, թող էն էլ թաքավոր տնունն:

էրկու ախպերներիցր ոչ մինը կարըմ չի թուրը մին վերչոկ էլ ա քաչեն տոնս:

Մանիչանկն ասրմ ա.— Որ ըտենց ա, թո ուրննց պերած դըչին երբիլ տան, որը կարաց, էն էլ կինի թաքավոր:

Ըստեղ էլ ախպորցր խոփը քարի յա տեմ ընգնրմ: Ղուչը երքըմ չի:

Ոսկի ծին էլ պերիլիցր եղը ոչ մինին թողըմ չի մոտ կն, եմ չի ուտըմ: Կլոխը կախ ախոռի առաչին նըստըմ ա, մնրմ:

Մին էլ թաքավորին խնրնր են պերըմ, թն մին ավչի ուզըմ ա մեջլիսըմը մին պնն ասի:

Բալաբեգին պերըմ են մեջլիս, ասրմ ա.— Ծառո՛ւկ թաքավորն ապրած կենա, լսել եմ, որ քու կոմըմը մին ոսկի ծի կա, եմ չի ուտըմ, թն կըթողաս, էտ ծին ես կըբեջնրեմ:

Ղուլլուղչիքը Բալաբեգին հենց պերըմ են կոմի առաչը, ծին մեչ դոլիցը խըրխընջըմ ա: Բալաբեգը մըննըմ ա կոմը, ծին մոութը մեկնըմ ա Բալաբեգին, էն էլ սկսըմ ա թոնմարիլը հու եմ տալը:

Ղուլլուղչիքը խնրնրը տանըմ են թաքավորին, թն սըհենց ու սըհենց:

Թաքավորը Բալաբեգին թնգնդանն կանչըմ ա պալատ, հըրցընըմ.— Որ ըտենց հոննարի տեր ես, մին դուլլուղ էլ պետմա անես: Իմ պապը ուրն թուրը կոխել ա մին մեծ քարի մեչ, ոչ ով կարըմ չի հանի, տոն պետմա հանես:

— Դե որ ասըմ ես, ով կարա քու խոսկիցը տոն կն, էտ ասածըտ քարը շտե՞ղ ա:

Ծառուկ թաքավորը ուրն ննգիր-վնգիրներով Բալաբեգին պերըմ են քարի կուշտը:

Բալաբեգն ասըմ ա.— Բա ստեղ իչ կա, որ կարըմ չեք հանիլ:

Մոտկանըմ ա ծեռը քցըմ հու նըրնհնըլը թուրը հանըմ:

Չիմըմ մնըմ են աչկերնին չոած:

էտ վնգըմը Մանիչանկը վազ տալով կնիխ ա փըթաթվըմ Բալաբեգին հու հորը ասըմ.— Ա՛հ եր, սրտիս այան էր, որ ոսկիթեփուռ դուչը պերիլը տրդորցըտ հոննարը չէր, էս տրդի հոննարն էր, համա գիղըմ չի, որ փորցանքից էսքամ շոտ կըպրծնի:

Թաքավորը Բալաբեգի ճակատը պաշտում աս, նհետը պերում պալատ:

Հենց մրննում են էն օթաղը, շտեղ ղըչի ղանփանգն էր, ղուչը սկսում աս ծվալալը, եղո մարթի լուզվով ասում աս. — Ծառո՛ւկ թաքավոր, տու գյանքըմըտ ոչ մինին փիսուլթուն չես արել, համա Բալաբեգի օրը սես արել: Բալաբեգը Նշան թաքավորի տըղեն աս, էն թաքավորի, որի թախտին մըհի նըստած ես: Հալամ իրեք ամսական էլ աս կար ոչ, եփ Նշան թաքավորը մեռավ, տու տըղի խընձարուրը տարար թողացիր քուլըմը, ինքըտ տանաթ թաքավոր: Բալաբեգին մին արչ մերուլթուն արավ, էղո էլ մին ավչի վեր կալավ, շահեց-պահեց, մինչու ինքն էլ մեռավ: Բալաբեգը ոսկի սիրտ ունի: Ախճըկանիցըտ գիղալով, որ ճուխտ տըղեքըտ փորցանքի մեչ են ընգել, կարացել չեն ոսկիթեփուռ ղուչը պերեն, ընդան ղըրկեց տուն, ինքը քինանց հավարներին: Քինանց շատ չըրչարվեց, համա համ ղուչը պերավ, համ էլ մին թաքավորի ախճիկ ու մին ոսկի ծի էլ վըրանտիր: Ետ տանունալից քունը հախտեց հու քնեց մին ծառի տակ, էտ ծառը տըղորցիցըտ մինն էր, կոխկինն էլ՝ էն մինը: Ջինն էր ընդանց ծառ շինել, մինչու մին անմեղ հոքի քնի ընդանցից մինի տակին: Բալաբեգի քնիլը տըղորցըտ թիլիսիմն էր: Թանգան մարթ տանան, համա մուխաննաթին, ուրանց պարերարին հեխտեցին, ինձ էլ, թաքավորի ախճըկանն էլ պերան ամարաթը: Համա ղե ում ճակատին ինչ կիրած աս, էն ինիլ վա, ճակատակիրից պըծում կա ոչ: Բալաբեգին ղըչերը սըղըցրան, որ ուրան հոր թախտին ինքը նըստի: Սըհենց պաներ:

Ծառուկ թաքավորն ու երկու ախպերնին չոքըմ են Բալաբեգի առաչին, ղաչանք անըմ, թողուլթուն խընթըմ:

Բալաբեգն ասում աս. — Դու՛կ աս, ես արչի կաթ եմ ծըծել, համա մարթից եմ պըտկըվել, էն էլ թաքավորի գանմից: Ծառուկ թաքավորը քանի սաղ աս, կընըստի ուրան թախտին, ոսկի ծին ուրան ջըլավովը՝ մին ախպորըս, ինձ հետ պերած թաքավորի ախճիկն էլ՝ մին ախպորըս, Մանիչանկն էլ թան ուզի, կըտանուն իմ կողակիցը:

Սըհենց էլ ինըմ աս: Օխտն օր, օխտը քըչեր հըրսանիք են անըմ, Բալաբեգը տանըմ աս Ծառուկ թաքավորի փեսեն հու աչ կուռը: Ոսկիթեփուռ ղուչն էլ ընդրանց կլխին ջուռա-ջուռա երքեր աս ասըմ: Ապըմ են սերով ու խաղաղուլթունով:

Ասըմ են՝ Ծառուկ թաքավորի մեռնիլից եղո Բալաբեգն աս տանըմ երգրի թաքավորը:

Սըհենց գորավոր պան աս ճակատակիրը:

Ասսանա ոսկի խնձոր չեմ ուզըմ, թան կըրմըրկենի վեր թափի, մենք էլ մեր պաժինը ստանանք: Ամմեն: